

Սարել Գալստյան

ԵՊՀ

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ

Միջպետական քաղաքական ինտեգրման հիմունքները

Միջազգային հարաբերությունների զարգացման համատեքստում 20-րդ դարի ամենանշանակալի իրադարձություններից են տարածաշրջանային միջպետական խմբավորումների կազմավորումը և դրանց բազմաբնույթ գործունեության ծավալումը, որոնք առավել հստակորեն արտահայտվում են վրոպական ինտեգրման և դրա հետ սերտորեն կապակցված տարածաշրջանայնացման գործընթացներում: Պայմանավորված այն հանգամանքով, որ ինտեգրումը, մասնավորապես, քաղաքական ինտեգրումը համաշխարհային քաղաքական պրակտիկայում հանդիսանում է որակապես նոր երևույթ, որի գիտական իմացությունը որոշակիորեն դուրս է գալիս ավանդական քաղաքական տեսությունների շրջանակներից՝ ներկայումս արևմտյան և, հատկապես եվրոպական քաղաքագիտական շրջանակներում կարևորվում է այդ գործընթացների ուսումնասիրության նոր մոտեցումների ու մեթոդների մշակման կամ արդեն մշակվածների զարգացման, հարմարեցման հարցը: Վերջինս առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես այն երկրների հասարակագիտական շրջանակների համար, որոնք ունեն այդ գործընթացներին ակտիվ մասնակցության փորձ կամ կամ էլ գտնվում են այդ գործընթացների ուղղակի ազդեցության տակ:

Հարկ է նշել, որ ինտեգրումը վաղուց է գտնվում գիտական շրջանակների ուշադրության կենտրոնում՝ հիմք հանդիսանալով գիտական տարբեր հայեցակարգերի և մեթոդների ձևավորման համար, ինչպիսիք են ֆեդերալիզմը, ֆունկցիոնալիզմը և նորաֆունկցիոնալիզմը, միջկառավարական մոտեցումը, բազմամակարդակ ղեկավարման և ինտեգրման հայեցակարգերը, քաղաքական ցանցերի տեսությունը և այլն: Դրանցից շատերը գործնականում ասպացուցել են իրենց կենսունակությունը, իսկ մյուսները, ընդհակառակը, չկարողանալով պատասխանել ժամանակի մարտահրավերներին, կորցրել են իրենց արդիականությունը կամ անհրաժեշտաբար նորացվել: Չնայած հայեցակարգերի այդ բազմազանությանը՝ դրանք հիմնականում վերաբերում են ինտեգրման առանձին հարցերին և, ըստ էության, չեն կարող հանդիսանալ ինտեգրման ամբողջական և միասնական մոտեցումներով ուսումնասիրության լիարժեք մեթոդների համալիր: Հաշվի առնելով այդ, ինչպես նաև այն հանգամանքը, որ ներկայումս հայ

գիտական շրջանակներում ինտեգրումը դեռևս չի արժանացել համարժեք ուշադրություն, իսկ քաղաքական ինտեգրումը կարծես բոլորովին չի արժարժվում՝ որոշակի արդիականություն են ստանում քաղաքական ինտեգրման տեսական և գործնական, այդ թվում՝ քաղաքական ինտեգրման կատեգորիալ ապարատի, մեխանիզմի և դրա գործառնության մոդելավորման հարցերը:

Այսպես, ներկայումս գիտական և հասարակական-քաղաքական շրջանակներում լայնորեն, երբեմն՝ ոչ տեղին կիրառվում է «ինտեգրում» եզրույթը՝ նկատի ունենալով, որպես կանոն, պետության անդամակցությունը որևէ միջազգային կազմակերպության, մասնավորապես, հասարակական կյանքի կամ միջազգային հարաբերությունների որևէ բնագավառում անդամ-պետությունների մոտեցումների՝ իրավաբանորեն ամրագրված նույնականացման, միասնականացման գործընթացը: Չժխտելով այդ մոտեցման որաշակիորեն արդարացվածությունը՝ հարկ է ընդգծել, որ անդամակցությունը որևէ միջպետական կառույցին կամ համաձայնությանը և միջպետական խմբավորման շրջանակներում տեղի ունեցող ինտեգրումը նույնական չեն: Ինտեգրման հասկացությունը բովանդակային և ծավալային առումով շատ ավելին է, քան անդամակցության հասկացությունը: Տվյալ դեպքում ինտեգրման հասկացությունը կարելի է օգտագործել և՛ որոշակի իրավիճակի, և՛ համակարգի ու նրա տարրերի միջև հարաբերության, և՛ քաղաքական համակարգի կայացման կամ զարգացման յուրահատուկ ուղղության բնորոշման համար: Սակայն միանշանակ է, որ քաղաքական ինտեգրումը պետք է դիտարկվի որպես սկզբնապես ինքնավար միավորների միջև փոխգործակցության ինտենսիվ և բազմաբնույթ մոդելների ստեղծում և պահպանում: *Քաղաքական ինտեգրումը կարելի է սահմանել որպես ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող որոշակի խնդիրների համատեղ լուծման նպատակով առանձին մասերի կամ ինտեգրման գլխավոր սուբյեկտների՝ պետությունների կամավոր և փոխշահավետ միավորում նոր, ինքնուրույն ամբողջության (հանրույթի, ընկերակցության) մեջ:* Հարկ է ընդգծել, որ ինտեգրման գործընթացում ազգային պետությունը թեև առաջնային, հիմնական կամ գլխավոր, բայց ոչ միակ սուբյեկտն է: Քաղաքական ինտեգրման գործընթացում կարևոր դերակատարություն ունեն նաև այնպիսի հարակից կամ ոչ հիմնական սուբյեկտներ, ինչպիսիք են գործունեության և գործառնության անդրազգային պրոեկցիա ունեցող տնտեսական, հասարակական կազմակերպությունները, կուսակցությունները, քաղաքական խմբավորումները և այլն:

Ուսումնասիրելով ինտեգրման գործընթացների համաշխարհային, մասնավորապես, արևմտաեվրոպական փորձը և վերհանելով դրանց օրինաչափությունները՝ կարելի է եզրակացնել, որ ինչպես ցանկացած ինտեգրում, քաղաքական ինտեգրումը քաղաքական

գործընթաց է, որի ընթացքում տեղի է ունենում ինտեգրման սուբյեկտների շահերի համաձայնեցում, հավասարակշռում, ձևավորվում են իշխանության կամ ազդեցության նոր՝ *ինտեգրացիոն ինստիտուտներ*, որոնք իրենց հերթին սկսում են ներագրել ինտեգրման գործընթացի վրա՝ միաժամանակ կրելով այդ գործընթացի սուբյեկտների ուղղակի և անուղղակի ազդեցությունը: Այդ ինստիտուտները կարելի է դիտարկել, մի կողմից, որպես ինտեգրացիոն ընկերակցության ներքին միասնությունն ապահովող և ընդհանուր արժեքների, կազմակերպական սկզբունքների, ռացիոնալ նորմերի վրա հենվող հարաբերությունների, ինտեգրացիոն ընկերակցության ներսում ինտեգրացիոն քաղաքականության այս կամ այն ոլորտի կարգավորման գործառույթ իրականացնող ընդհանրական սկզբունքների, նորմերի, նպատակների և արժեքների համակարգ, իսկ մյուս կողմից՝ որպես ինտեգրացիոն հարաբերությունները կարգավորող մարմինների համակարգ:

Ինտեգրացիոն ինստիտուտները կարող են ունենալ միջկառավարական և վերազգային բնույթ: Առաջին տիպի ինստիտուտները միջկառավարական մարմիններ են, որոնց գործառնության նպատակը հանդիսանում է պետությունների միջոցով նրանց ինտեգրացիոն հարաբերությունները կարգավորումը: Այս տիպի ինստիտուտներն ընկերակցության իշխանության մարմինների աստիճանակարգության մեջ զբաղեցնում են վերազգային ինստիտուտներից ցածր և ազգային պետություններից բարձր տեղ: Այս տիպի ինստիտուտները կարելի է համարել ավանդական միջպետական հարաբերությունների մարմնավորումներ, որոնք կարող են և վերանալ քաղաքական ընկերակցության վերջնական ձևավորման դեպքում: Իսկ ինչ վերաբերում է վերազգային ինստիտուտներին, ապա պետք է նշել, որ թեև դրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստեղծվում են ինտեգրման սուբյեկտների կողմից, սակայն, ըստ էության, անկախ են ազգային իշխանություններից:

Ինտեգրման հիմնական խթանիչ ուժը վերազգային ինտեգրացիոն ինստիտուտներն են, որոնք հետևում են նախանշված ուղությամբ ինտեգրման գործընթացների զարգացմանը և իրականացնում այնպիսի հանգուցային լիազորություններ, ինչպիսիք են ինտեգրման բոլոր սուբյեկտների համար պարտադիր ուժ ունեցող իրավական ակտերի ընդունումը և պարտադիր իրագործման ենթակա խնդիրների որոշումը:

Քաղաքական ինտեգրման վերջնական արդյունքը նոր քաղաքական ամբողջի, միասնության կամ ինտեգրացիոն ընկերակցության ձևավորումն է, որը բովանդակային տեսանկյունից ավելին է, քան այդ ընկերակցության բաղկացուցիչ մաս հանդիսացող սուբյեկտների պարզ թվաքանակական գումարը: Այստեղ օգտագործվում է «արդյունք», այլ ոչ թե «նպատակ» բառը, քանզի կարելի է ենթադրել, որ ինտեգրացիոն սուբյեկտները

կարող են և սկզբնապես չունենալ քաղաքական ընկերակցության ձևավորման նպատակ: Տվյալ դեպքում այդպիսի ընկերակցության կազմավորումը հանդես է գալիս կա'ն որպես «ինքնաբուխ» արդյունք, կամ որպես ինտեգրացիոն սուբյեկտների առջև դրված ընդհանուր խնդիրների արդյունավետ լուծման միջոց:

Ինտեգրացիոն ընկերակցությունն իրենից ներկայացնում է պետությունների միավորում (միություն, հանրույթ, համակարգ), որն օժտված է ինտեգրացիոն ինքնաբավ մեխանիզմներով: Տվյալ դեպքում ինտեգրացիոն ընկերակցությունը հանդես է գալիս որպես քաղաքականության ինքնուրույն սուբյեկտ:

Հարկ է նշել նաև, որ «ինտեգրացիոն ընկերակցություն» եզրույթը կիրառելի է բնորոշելու համար և՛ դեռևս ինտեգրման գործընթացում գտնվող, և՛ այդ գործընթացների արդյունքում ի հայտ եկած պետությունների խմբավորումը: Չնայած վերջինիս առավել համապատասխանում է «ինտեգրված ընկերակցություն» եզրույթը, այդուհանդերձ, հիմք ընդունելով այն կանխադրույթը, որ քաղաքական ինտեգրման գործընթացը շարունակական է և կարող է ավարտվել միայն ընկերակցության հիման վրա նոր, «գերպետության» կամ «հետազգային» պետության կազմավորմամբ, ինչպես նաև այն մոտեցումը, որ ինտեգրումը դիտարկվում է որպես գործընթաց և համակարգի ու նրա տարրերի միջև հարաբերության ձև, «ինտեգրացիոն ընկերակցություն» եզրույթն այստեղ կիրառվում է առաջին իմաստով:

Խոսելով ընկերակցության սուբյեկտիվության մասին՝ կարելի է տարբերել դրա երկու տեսակ՝ իրավական և քաղաքական: Իրավասուբյեկտիվությամբ ընկերակցությունը կարող է օժտված լինել երկու դեպքում. նախ, եթե ընկերակցության մաս կազմող ազգային պետությունները լիազորում են ընկերակցությանը միջազգային հարաբերություններում հանդես գալ իրենց անունից, և երկրորդ, եթե ընկերակցությունն իրենից ներկայացնում է «հետազգային» կամ «հավաքական ինքնիշխանությամբ» օժտված պետականակերպ կազմավորում: Իսկ քաղաքական սուբյեկտիվությամբ ընկերակցությունն օժտված է ամեն դեպքում, քանզի հենց դրանում է կայանում քաղաքական ինտեգրման էությունը, երբ ինտեգրացիոն ընկերակցությունը հանդես է գալիս որպես քաղաքականության ինքնուրույն սուբյեկտ: Չի բացառվում նաև այն դեպքը, երբ քաղաքական սուբյեկտիվությամբ և իրավասուբյեկտիվությամբ օժտված ինտեգրացիոն ընկերակցությունները լինեն միևնույն ինտեգրացիոն ընկերակցության զարգացման մակարդակներ, այսինքն՝ քաղաքական սուբյեկտիվությամբ օժտված ընկերակցությունը զարգացման ընթացքում օժտվում է նաև իրավասուբյեկտիվությամբ:

Վերլուծական մակարդակում ինտեգրացիոն ընկերակցությունը կարելի է ներկայացնել *ինտեգրացիոն համակարգի* տեսքով: Վերջինս կարելի է դիտարկել որպես

ինտեգրման գործընթացն ապահովող և խթանող օրինաչափորեն փոխկապակցված տարրերի ամբողջություն, որն իրենից ներկայացնում է նոր որակ, որը չի հանգում նրա տարրերի որակների պարզ գումարին: Հիմք ընդունելով համակարգային մոտեցումը՝ յուրաքանչյուր ինտեգրացիոն համակարգ կարող է դիտարկվել նաև որպես ենթահամակարգ՝ առավել բարձր մակարդակի համակարգի տարր: Տվյալ դեպքում այն հանդես է գալիս որպես բարձր համակարգի համեմատաբար ավելի բարդ տարր, որն ունի սեփական կառուցվածք և, այդպիսով, հանդիսանում է ավելի պարզ բաղկացուցիչ մասերի ամբողջություն, քան ինքն է:

Ինչպես յուրաքանչյուր համակարգի, այնպես էլ ինտեգրացիոն համակարգի կարևորագույն հատկությունը հանդիսանում է *կառուցվածքի* առկայությունը: Վերջինս իրենից ներկայացնում է *համակարգի տարրերի միջև կանոնակարգված և կայուն կապերի համակարգ՝ պայմանավորված այդ տարրերի գործառույթների բազմազանությամբ, հատկապես, համակարգի կայունության պահպանման գործում դրանց խաղացած դերով:*

Ինտեգրացիոն համակարգի բնորոշման մեջ հանգուցային նշանակություն ունի դրա տարրերի միջև կապի՝ օրգանական փոխազդեցության գործոնը: Այդ համակարգի բարդությունը կախված է նրա բաղկացուցիչ տարրերի քանակից ու դրանց միջև փոխազդեցության հազեցվածությունից: Այսինքն՝ որքան շատ են բաղկացուցիչ տարրերը և որքան հազեցած ու ինտենսիվ է դրանց միջև փոխազդեցությունը, այնքան բարդ է համակարգը: Բնականաբար, ինտեգրացիոն համակարգն ունի բարդ բնույթ, քանզի բարդ են թե՛ նրա կառուցվածքը՝ տարրերի միջև փոխազդեցության համակցությունը, թե՛ նրա գործառույթները՝ այդ փոխազդեցության բնույթն ու բովանդակությունը:

Ինտեգրացիոն համակարգի կարևորագույն բնութագրիչներ կարող են դիտարկվել համընդհանրությունը, երբ համակարգն իր ներգործությամբ ընդգրկում է ինտեգրացիոն սուբյեկտների հասարակական հարաբերություններն ամբողջությամբ, լիարժեք հսկողությունը ֆիզիկական և այլ կարգի հարկադրանքի կիրառման նկատմամբ, պարտադիր որոշումներ ընդունելու՝ համակարգի իրավունքի լեգիտիմությունը, համակարգի որոշումների իշխանական բնույթը, երբ դրանք իրենց մեջ կրում են լեգիտիմության ուժ և այն հանգամանքի էական հավանականությունը, որ մարդիկ (կամ ինտեգրացիոն սուբյեկտները) կենթարկվեն դրան:

Քաղաքական ինտեգրման ողջ մեխանիզմի ակտիվացման կարևորագույն հիմքն ինտեգրացիոն միջավայրի առկայությունն է: Վերջինս այն արտաքին և ներքին գործոնների ամբողջությունն է, որոնք մշտապես փոխազդեցության մեջ են գտնվում ինտեգրացիոն համակարգի հետ, պայմանավորում են վերջինիս գործառնության ձևն ու պայմանները:

Կարելի է տարբերել ինտեգրացիոն միջավայրի երկու՝ արտաքին (մակրոմիջավայր) և ներքին (միկրոմիջավայր) կողմեր: Եթե արտաքին միջավայրը շրջապատում է ինտեգրացիոն համակարգը, ապա համակարգն ինքը ներառում է ներքին միջավայրը: Այդ երկու միջավայրերը գտնվում են մշտական փոխազդեցության մեջ, որը տեղի է ունենում և՛ ուղղակիորեն, և՛ միջնորդված՝ համակարգի միջոցով: Ավելին, համակարգն ինքը փոխազդեցության մեջ է գտնվում այդ երկու միջավայրերի հետ՝ ներազդելով դրանց կամ դրանց որոշ տարրերի վրա կամ կրելով այդ միջավայրերի կամ դրանց որոշ տարրերի ազդեցությունը:

Կարելի է ենթադրել, որ ի սկզբանե գոյություն ունի մեկ միասնական միջավայր, որի հիման վրա աստիճանաբար կազմավորվում է ինտեգրացիոն համակարգը: Հենց այդ ժամանակ որոշակիորեն ուրվագծվում են համակարգի ընդգրկած և դրանից դուրս գտնվող միջավայրերը: Սակայն արտաքին ու ներքին միջավայրերի միջև չկա հստակ սահմանագատում, քանզի միևնույն գործոնները, դրանց փոխազդեցությունները կարող են գտնվել թե՛ մեկում, թե՛ մյուսում: Այդուհանդերձ ակնհայտ է, որ ինտեգրացիոն համակարգի ներքին միջավայրը հիմնականում կազմում են համակարգի տարրերը, դրանց փոխազդեցությունները, բնույթն ու բովանդակությունը, իսկ արտաքին միջավայրը հիմնականում կազմում են ինտեգրման գործընթացը պայմանավորող նախադրյալներն ու նախապայմանները: Ինտեգրացիոն համակարգի զարգացումը տեղի է ունենում գերազանցապես արտաքին միջավայրի մարտահրավերներին դիմակայելու, դրա փոփոխվող բնույթին հարմարվելու միջոցով՝ ի հաշիվ գերազանցապես ներքին միջավայրի համակարգապահական տարրերի, այդ թվում՝ ինտեգրացիոն ինստիտուտների գործառնության:

Ինտեգրման հիմքերն իրենցից ներկայացնում են նշված նախադրյալների և նախապայմանների փոփոխական համալիր, որտեղ որպես նախադրյալ կարելի է դիտարկել արտաքին և ներքին գործոնների այն ամբողջությունը, որն ինքնին չի պայմանավորում ինտեգրման գործընթացի սկզբից, այլ միայն նպաստավոր հիմք է ստեղծում ինտեգրման գործընթացի սկզբնավորման և, հնարավոր է, նորմալ ընթացքի համար: Ինտեգրման նախապայմաններն իրենց հերթին հանդիսանում են արտաքին և ներքին գործոնների այն ամբողջությունը, առանց որի առկայության անհնար է սկսել ինտեգրման գործընթաց, առավելա, ապահովել դրա բնականոն ընթացքը:

Ինտեգրման յուրաքանչյուր տիպ, բնականաբար, կարող է ունենալ իրեն հատուկ նախադրյալներ և նախապայմաններ: Դրանք, բնական է, կայուն, անփոփոխ մեծություններ չեն: Ինտեգրման ընթացքում դրանք կարող են փոփոխվել, դառնալ ավելի կամ պակաս նպաստավոր կամ էլ փոխարինվել այլ գործոններով: Որպես քաղաքական

ինտեգրման նախադրյալներ կարելի է դիտարկել ինտեգրման վրա ազդող այն գործոնները, որոնք ուղղակիորեն կազմում են ինտեգրման առարկայական հիմքերը, իսկ նախադրյալներ՝ այն գործոնների ամբողջությունը, որոնց ազդեցության պայմաններում է ինտեգրումը դառնում կոնկրետ իրողություն:

Ինտեգրման գործընթացի սուբյեկտների ջանքերի արդյունավետությունը կախված է տարբեր գործոններից, որոնք ներառում են ինտեգրման գլխավոր սուբյեկտների՝ ազգային պետությունների տնտեսական և քաղաքական կյանքի տարբեր ոլորտներ: Տարբեր են նաև ինտեգրացիոն ընկերակցության հետագա գործառնության վրա ազդող հիմքային դետերմինանտները, ինչպես նաև ինտեգրման վերջնական նպատակները: Դա հավաստում է արդի ինտեգրման գործընթացների սկզբնավորման, մեծամասամբ, տարածաշրջանային պայմանավորվածությունը:

Եթե փորձենք ներկայացնել քաղաքական ինտեգրման կամ ինտեգրացիոն ընկերակցության կազմավորման մեխանիզմը, ապա պայմանականորեն կարելի է առանձնացնել տարածաշրջանային քաղաքական ինտեգրման զարգացման երեք հիմնական փուլեր: Այսպես, ինտեգրման առաջին՝ ինտեգրման գործընթացների ակտիվացման փուլում առաջնային մակարդակում տեղի է ունենում ֆորմալ և ոչ ֆորմալ սոցիալ-տնտեսական փոխկապվածության ինտենսիվացում: Պետությունների փոխգործակցությունն ունի անկայուն բնույթ և փոխկախվածությունն օգտագործվում է միակողմանի առավելություն ստանալու նպատակով: Ընդհանուր բնույթի կոնկրետ հարցերի շուրջ պետությունների փոխհամաձայնությունն ունի դիպվածային բնույթ, իսկ ձեռք բերված համաձայնությունների իրագործման նկատմամբ հսկողությունն իր վրա է վերցնում շահագրգիռ կողմը: Պետությունների խմբավորման շրջանակներում դեռևս հնարավոր են կոնֆլիկտային իրավիճակներ, «ուժային» քաղաքականության կիրառման հնարավորությունը մեծ տեղ է գրավում պետությունների արտաքին քաղաքականության զինանոցում:

Այս փուլում ազգային պետությունները դեռևս պահպանում են իրենց ազդեցությունն ազգային-պետական տարածքների և քաղաքացիների վրա, այսինքն՝ ազգային ինքնիշխանությունը դեռևս սահմանափակված չէ: Այդուհանդերձ, ինտեգրացիոն սուբյեկտների մոտ արդեն ձևավորվում է ինտեգրման շահավետության ֆորմալ գիտակցումը:

Քաղաքական ինտեգրման երկրորդ՝ ինտեգրացիոն ընկերակցության ձևավորման կամ ինստիտուցիոնալացման փուլում հստակ նախանշվում է ինտեգրման ընդհանուր կուրսը: Ի հայտ են գալիս ինտեգրման կոնկրետ և սկզբունքային առավելությունների հստակ գիտակցում և համատեղ գործելու շահագրգռություն: Առավել հաջող ինտեգրման

համար պետություններն ընտրում են տնտեսական-քաղաքական համագործակցության կոնկրետ մոդել, հստակեցնում համագործակցության ուղղությունները և մշակում համատեղ ինտեգրացիոն զարգացման միասնական ռազմավարություն: Պետությունների փոխհարաբերություններում աստիճանաբար հաղթահարվում է պետական եսակենտրոնությունը, ստեղծվում են համագործակցության փոխշահավետ պայմաններ և, ամենակարևորը, աստիճանաբար ուրվագծվում են ինտեգրացիոն սուբյեկտների հավաքական արժեքները:

Տեղի է ունենում նաև ինտեգրման նորմատիվային ամրագրում՝ ինտեգրման գործընթացներն ստանում են հստակ պայմանագրային հիմքեր, ձևավորվում են տարածաշրջանային միջպետական ինտեգրացիոն ինստիտուտներ, նախանշվում է նաև վերազգային ինտեգրացիոն ինստիտուտների ձևավորումը: Այսպիսով, տեղի է ունենում տարածաշրջանային ինտեգրման ֆորմալ ինստիտուցիոնալացում:

Իսկ արդեն ինտեգրման երրորդ՝ ինտեգրացիոն ընկերակցության կայացման փուլում պետության առանձին ինքնիշխան լիազորություններ աստիճանաբար տեղափոխվում են վերազգային մակարդակ, որի առաջնային ակտորներն իրենցից ներկայացնում են հավաքական գործողությունների համար անհրաժեշտ լիազորություններով և դրանց իրագործման համար համապատասխան գործիքներով օժտված ինստիտուտներ: Այս փուլում տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորման մեջ ի հայտ են գալիս բարձրագույն քաղաքական իշխանության միասնական մարմիններ, ներքին ու արտաքին քաղաքականությունը կարգավորող, վերահսկող, ինտեգրման գործընթացը խթանող վերազգային ինստիտուտներ, (ներքին) հավաքական ինքնության և (արտաքին) միասնության կամ ինտեգրացիոն նույնականության հիմնատարրերը:

Կարելի է առանձնացնել նաև ինտեգրման գործընթացների զարգացման չորրորդ՝ արդեն ինտեգրված ընկերակցության գործառնության փուլը: Այս փուլում ընկերակցության զարգացումը կարող է ընթանալ երկու՝ գործառնության և «հետազգային» պետության ձևավորման ուղիներով: Առաջին դեպքում ինտեգրման գործընթացին մասնակցող պետությունները շարունակում են պահպանել իրենց ինքնիշխան լիազորությունների հիմնական մասը, իսկ նորաստեղծ քաղաքական ընկերակցության ինստիտուտներն իրականացնում են ընդամենը վերահսկողական և նորմաստեղծ գործառնությ: Դրանք որոշակիորեն սահմանափակում են մասնակից-պետությունների արտաքին ինքնիշխանությունը, սակայն չեն միջամտում նրանց ներքին ինքնիշխանությանը:

Երկրորդ դեպքում քաղաքական ընկերակցությունն օժտված է ազգային-պետական ինքնիշխանության գրեթե բոլոր հատկանիշներով, մինչդեռ դրա մաս կազմող

պետություններն արդեն գրկված են իրենց հիմնական գործառույթներից: Արդյունքում առավել հավանական է դաշնային կառուցվածքով պետականակերպ կազմավորման առաջացում: Ավելին, չի բացառվում նաև, որ գործառութային ընկերակցությունները ևս հետագա զարգացման արդյունքում վերածվեն «հետագային» պետության: Այս դեպքում ինտեգրման գործընթացների զարգացման փուլերը կավելանան ևս մեկով:

Ամեն դեպքում ինտեգրման չորրորդ փուլում տեղի է ունենում քաղաքական ինտեգրման գործընթացների տրամաբանական ավարտը հատկանշող կարևորագույն գործոններից մեկի՝ ինտեգրացիոն նույնականության ձևավորումը: Վերջինս իրենից ներկայացնում է կոնկրետ ինտեգրացիոն համակարգի տեսքով անհատական կամ խմբային ինքնաընկալման արդյունք հանդիսացող որակ: Տվյալ դեպքում ընկերակցության սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր պետության քաղաքացու կամ դրանց գերակշիռ մեծամասնության մոտ առկա է ընդհանրության զգացում, որի դեպքում նրանք սեփական են համարում այդ համակարգի համար ընդհանրական և հիմնային համարվող արժեքները, նորմերը, վարքի կանոններն ու մոդելները:

Ամբողջացնելով մեր մոտեցումները քաղաքական ինտեգրման մեխանիզմների վերաբերյալ՝ կարող ենք եզրակացնել, որ պետությունների միջև հարաբերությունները կրում են ինտեգրացիոն բնույթ, եթե դրանք բավարարում են առնվազը չորս հիմնական պահանջների:

Առաջին, անհրաժեշտ է **համագործակցության նորմատիվ-իրավական ամրագրում**, ինչը նշանակում է, որ պետությունների միջև ինտեգրացիոն գործակցությունն իր ամրագրումն է ստանում միջպետական պայմանագրերի տեսքով: Դրանցում արտացոլվում են նորմատիվ-իրավական ակտերի նախապատրաստական փուլում պետությունների շահերի համաձայնեցումը, ընդհանուր նպատակների, խնդիրների, համատեղ գործողությունների, ինտեգրման փուլերի, մակարդակների նկատմամբ վերահսկողության և դրա մեխանիզմների, այդ գործընթացում պետությունների ստանձնելիք պարտավորությունների, ընդհանուր չափանիշների, չափորոշիչների և այլ հարցերի շուրջ պետությունների պայմանավորվածությունները:

Երկրորդ, այդ **համագործակցությունը պետք է լինի ինստիտուցիոնալացված**, այսինքն, պետք է կազմավորվեն ինտեգրացիոն ինստիտուտներ, կառույցներ և կառուցվածքներ, որոնք կոչված են խթանելու և վերահսկելու ինտեգրման գործընթացը, լուծելու ինտեգրման գործընթացում և դրա հետ կապված հնարավոր տարաձայնություններն ինտեգրվող սուբյեկտների միջև, ինչպես նաև կարգավորելու փոխհարաբերությունները ինտեգրացիոն ընկերակցության մասնակիցների և երրորդ պետությունների միջև:

Երրորդ գլխավոր պահանջը կայանում է նրանում, որ ինտեգրացիոն համակարգում պետք է առկա լինի **իշխանության աստիճանակարգային տարանջատում** ինտեգրացիոն ինստիտուտների (վերին մակարդակ) և ինտեգրման մասնակից-պետությունների (ստորին մակարդակ) միջև, ինչը ենթադրում է ազգային պետության ինքնիշխան լիազորությունների (մասնակի) փոխանցում ինտեգրացիոն ինստիտուտների մակարդակ: Վերջինիս հիմնական ցուցանիշը հանդիսանում է պարտադիր որոշումների ընդունման, իրականացման և դրանց համար պատասխանատու մարմինների միջև ենթադասության (ուղղահայաց) և համադասության (հորիզոնական) աստիճանակարգված հարաբերությունների հստակ համակարգի առկայությունը ենթաազգային (տեղական ինքնակառավարման), ազգային (պետական), միջպետական և վերազգային ինտեգրացիոն ինստիտուտների մակարդակներում, դրանց միջև զսպումների, հակակշիռների և հավասարակշիռների մեխանիզմների առկայությունը:

Ինտեգրացիոն հարաբերությունների կարևորագույն չափորոշիչներից է ինտեգրացիոն ընկերակցության մասնակից-պետությունների քաղաքացիների մոտ **ինտեգրացիոն նույնականության կամ դրա ձևավորման ակնհայտ միտման առկայությունը**, այսինքն ինտեգրացիոն նորմերի, չափանիշների, չափորոշիչների միատեսակ կիրառում, ընդհանրական և հիմնային արժեքների, նորմերի, վարքի կանոնների և մոդելների լեգիտիմ տարածում մասնակից-պետություններում, ինչպես նաև ինտեգրման հետ կապված հարցերում միատեսակ մոտեցում մասնակից-պետությունների կողմից երրորդ պետությունների հետ հարաբերություններում:

Ամփոփելով ասվածը՝ հարկ է ընդգծել, որ քաղաքական ինտեգրումն ինքնին գործնականում հանդես չի գալիս «մաքուր» տեսքով, այլ, ավելի շուտ, իրենից ներկայացնում է ինտեգրման մյուս ուղղությունների, մասնավորապես, տնտեսական ինտեգրման զարգացման տրամաբանական շարունակությունը: Ավելին, կախված միջպետական խմբավորման բնույթից և նրա առջև դրված կոնկրետ նպատակներից ու խնդիրներից, յուրաքանչյուր ինտեգրման գործընթաց, պահպանելով զարգացման ընդհանուր օրինաչափությունները, ունի իր յուրահատկությունները, որոնք արտահայտվում են և՛ ինտեգրման զարգացման փուլերում, և՛ մեխանիզմներում, և՛ այդ մեխանիզմների գործառնության մեջ:

Ինտեգրացիոն խմբավորումների համար առաջնային ընդհանուր խնդիրներ կարող են հանդիսանալ և՛ առավելագույն տնտեսական բարեկեցության ձեռքբերումն ու շահույթն արտաքին առևտրից, և՛ ընդհանուր ռազմաքաղաքական անվտանգության ու կայունության ապահովումը, և՛ համաշխարհային քաղաքական դաշտում մասնակից-պետությունների դիրքերի ամրապնդման ձգտումը:

Ինտեգրման հաջող ընթացքի համար կարևոր գործոններ են հանդիսանում մասնակից-պետությունների աշխարհագրական հարևանությունը քաղաքական-տնտեսական զարգացվածության համեմատաբար նույն մակարդակի կամ համատեղելի մոդելների առկայությունը, քաղաքական վարչակարգերի միատիպությունը, աշխարհաքաղաքական կողմնորոշումների համատեղելիությունը, ազգային ինքնության տարրերի՝ թեկուզև տարբեր, բայց ոչ իրարամերժ համակցությունը, հանդուրժողականության ու փոխվստահության առկայությունը և այլն:

Основы межгосударственной политической интеграции

В статье анализируются некоторые теоретические и методологические вопросы межгосударственной политической интеграции, в том числе конкретизируется категориальный аппарат исследования политической интеграции, даются дефиниции и характеристика некоторых центральных понятий, таких как интеграция и политическая интеграция, интеграционное сообщество и интеграционная система, интеграционная среда и т.д. На основе анализа опыта международных интеграционных процессов разрабатывается теоретическая модель механизма политической интеграции: этапы и уровни развития, основные критерии политической интеграции. В статье выявляются основные условия и предпосылки для успешного хода процесса политической интеграции, а также делается вывод, что политическая интеграция на практике в основном развивается на основе других направлений интеграции, в частности, экономической интеграции, и представляет собой логическое продолжение развития экономической интеграции.

Bases of interstate political integration

In article are analyzed some theoretical and methodological questions of interstate political integration, including is concretized the categorical device of research of political integration, are given definition and the characteristic of some central concepts, such as integration and political integration, integration community and integration system, integration environment. On the basis of the analysis of experience of the international integration processes is developed the theoretical model of the mechanism of political integration: stages and levels of development, the basic criteria of political integration. In article come to light the basic conditions and preconditions for a successful course of process of political integration, and also is judged, that political integration in practice basically develops on the basis of other directions of integration, in particular, economic integration, and represents logic continuation of development of economic integration.